ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՆԴ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. բարձրագույն կրթություն.
2. հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.
3. Իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն.
4. կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն.
5. հմտությունների (առաջնորդում, ռազմավարական պլանավորում, վերլուծական մտածողություն, որոշումների կայացում, հաղորդակցման հմտություններ, բանակցությունների վարում, փոփոխությունների կառավարում, կոնֆլիկտների կառավարում, ժամանակի կառավարում, տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետում, տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, օտար լեզվի իմացություն և այլն) տիրապետում.

Տնօրենների ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

- ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
- համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն.
- ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
- ռուսերենի կամ անգլերենի կամ գերմաներենի կամ ֆրանսերենի իմացություն:

6. **Կազմակերպության հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը՝**

- Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների և օգտակար հանածոների արդյունահանման

նպատակով տրամադրված ընդերքի տեղամասերի պետական հաշվառման իրականացումը.

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման համար տրամադրված ընդերքի տեղամասերի հաշվառման մատյանի, օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի և հանքավայրերի ու օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարումը, ինչպես նաև երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում ստացած տեղեկությունների ընդունումը և պահպանումը.
- Երկրաբանական տեղեկության միասնական համակարգի ստեղծումը, վարումը և տնօրինումը, պահպանությունը.
- Միասնական կոորդինատային համակարգով տրամադրված ընդերքի տեղամասերի ծայրակետային կոորդինատների համադրումը ֆոնդային նյութերի հետ, ֆոնդային նյութերում փոփոխությունների կատարումը.
- Օգտակար հանածոների պաշարների, հանքավայրերի, երևակումների և երկրաբանական ուսումնասիրությունների պետական հաշվառման տվյալների հիման վրա ընդերքօգտագործման ֆոնդի ստեղծումը և վարումը:
- Հանքավայրերն ըստ մարզերի, օգտակար հանածոների տեսակների (այդ թվում՝ ստորերկրյա հանքային ջրերի) դասակարգումը.
- Ընդերքօգտագործման իրավունքով ծանրաբեռնվածության վերաբերյալ վերլուծության իրականացումը.
- Օգտակար հանածոների պաշարների քանակական շարժի՝ ըստ մարզերի, տարիների, օգտակար հանածոների տեսակների վերլուծումը:

«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի թեստավորման և հարզազրույցի փուլը կանցկացվի **2025 թվականի նոյեմբերի 4-ին, ժամը 10:00-ին,** Նախարարության շենքում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, 6-րդ հարկ՝ դահլիճ):

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի շրջանակ՝

ա) Սահմանադրություն.
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723

բ) Աշխատանքային օրենսգիրք.
https://www.arlis.am/hy/acts/208687

գ) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենք
https://www.arlis.am/hy/acts/193927
դ) ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140551
ե) «Գնումների մասին» օրենք.
https://www.arlis.am/hy/acts/165080/latest
զ) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենք.
https://www.arlis.am/hy/acts/203967/latest
է) <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ>> ՊՈԱԿ կանոնադրություն
https://www.geo-fund.am/filemanager/Documents/Charter_30.06.2020.pdf
ը) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենք:
https://www.arlis.am/hy/acts/178468
թ) ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 14-ի «Պինդ օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների և կանխատեսումային պաշարների դասակարգումը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի փետրվարի 9-ի N 80 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 274-Ն որոշում.
https://www.arlis.am/hy/acts/152362
ժ) ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 22-ի «Ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 94 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1480-Ն որոշում.
https://www.arlis.am/hy/acts/79585

Հիմնական աշխատավարձի չափը՝ 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Դիմումները ընդունվում են **փաստաթղթային եղանակով**՝ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է Նախարարության (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, 6-րդ հարկ) **անձնակազմի կառավարման բաժին** անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Քաղաքացին ներկայացվող բնօրինակ փաստաթղթերի հետ ներկայացնում է նաև դրանց պատճենները, փաստաթղթերի լիարժեքությունը ստուգելու նպատակով: Փաստաթղթերը ընդունող աշխատակցի կողմից հավակնորդին տրամադրվում է համապատասխան նշումով ստացական:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է Նախարարություն ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (լրացվում է տեղում).
2. Ինքնակենսագրություն (ոճը՝ Նախարարության կողմից սահմանված ձևաչափով).

3. անձնագիր և նույնականացման քարտ՝ (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք),

4. Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ (էլեկտրոնային տարբերակով առավելագույնը 20 էջ), որը կպարունակի համապատասխան պետական կազմակերպության ոլորտի առկա խնդիրների համակարգային վերլուծությունը և գնահատումը, ներառի համապատասխան պետական կազմակերպության բնագավառի զարգացման և բարեփոխման առաջարկները.

5. 2 գունավոր լուսանկար 3Х4 չափսի.

6. բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմը (դիպլոմները),

7. օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթը՝ առկայության դեպքում.

8. գիտական աստիճանի վկայականը՝ առկայության դեպքում.

9. աշխատանքային գործունեությունը հավաստող վավերացված համապատասխան տեղեկանք (փաստաթուղթ), որը կբավարարի հայտարարության 2-րդ կետում նշված աշխատանքային ստաժի պահանջներին և հաշվառման համակարգի տեղեկատվական բազայում առկա տվյալները ներառող տեղեկանք նախկին աշխատանքային գործունեության վերաբերյալ.

10. արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական.

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են աշխատանքային օրերին՝ 2025 թվականի հոկտեմբերի 2-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 23-ը ներառյալ՝ ժամը 9.30-ից 13.00-ը:

Քաղաքացիները մրցույթի թեստավորմանը և հարցազրույցին պետք է ներկայանան անձնագրով և/կամ նույնականացման քարտով, կամ անձը հաստատող այլ փաստաթղթով (ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ):

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, հեռախոսահամարներ՝ 010-511-355, 010-511-316, էլեկտրոնային փոստի հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am):

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ

1. Ո՞վ կարող է նշանակվել պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում:

   1) բարձրագույն կրթություն ունեցող՝ Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ

   2) բարձրագույն կրթություն ունեցող՝ Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ առնվազն վեց տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ

   3) բարձրագույն կրթություն ունեցող՝ Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ

   4) բարձրագույն կրթություն ունեցող՝ Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 16